սորդը Հայկեան ցեղին ծագումն առնելով ազգային պատմութեան ընտիր ամփոփում մը, շատ գեղեցիկ և ամենայարմար կարգաւորութեամբ մը շարագրեր էր՝ հանդերձ նշանաւոր և երևելի անցից իրարու և ուրիշ ազգաց և տէրութեանց հետ ունեցած յարաբերութիւններովն, և այն և այլն։ Իր բնական և անարհեստ շարժումները և մաքուր ու յստակ ոճը՝ ալ աւելի հաճելի և սիրելի ըրին ունկնդրաց իր աւանդած ազգային պատմական ճշմարտութիւնները։ Ինքը մէկ երկու Անգղիացի և Գաղղիացի հեղինակներէ համառօտ քաղուածներ ըրած էր Հայոց ազգին վերաբերեալ, որ շատ աղուոր ապացոյց եղած էին իր ներկայացուցածներուն։ Բանը ամբողջութեամբը առնելով հաւատալի ենք որ շատ ազդու և օգտակար տպաւորութիւն մը ըրաւ օտար ազգի ունկնդրաց վրայ, ինչպէս որ մեր Համազգեացս վրայ։

Ցիրաւի շատ հաճելի և սրտաշարժ տեսարան մի էր Հայ սրտերու համար։ 20–25 տարեկան գաւառացինակ աղքատիկ բայց ուսումնասէր Հօր զաւակ երիտասարդ մը, որ միայն Պօլիս մայրաքաղաքը տեսած է, անկէ անդին չէ անցած, կենայ օտարազգի ունկնդրութեան մը առջև և առաջին անգամը ըլլալով օտար լեզուաւ ազգային ճառ մը խօսի, ճառ մը որ ամենէն՝ կրկին ծափահարութեամբ գովաբանուի։ Երեսուն քառասուն տարի առաջ մարդու մտքէ անգամ չէր անցներ։ Աւարտման ճառին Անգղիոյ դեսպանատան մատուռանապետ Պատուելի. Որիպպըլ՝ որ հանդէսին նախագահն էր, հանդիսականաց շնորհակալութեանը թարգման լինելով, գովաբանական համառօտ բայց ազդու ուղերձ մը ըրաւ և ծափահարութեամբ վերջացաւ հանդէսը։

Դիտակ. Մայիս 6։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

Քաղուածք յօրագրութեանց Սինոդին։

Մայիս 4.—Արժ. Յակոբ Վարդապետ տէր Աւետիքեանց կարգեցաւ Վանահայր ՚ի Վանս Ս. Թովմայի Ագուլեաց՝ ՚ի տեղի Արժ. Ստեփաննոս Վարդապետի. որ և ստացաւ Ս. Աթոռոյս անանոյի Վերատեսչութեան պաշտօնը։

„ 8.—Ի յարգանս Թախանձանաց ականաւոր ժողովրդականաց Շամախւոյ և ըստ միջնորդութեան Հոգևոր Տեսչի վիճակին Գեր. Անդրէաս Արքեպիսկոպոսի՝ Իսրայէլ Քահանայ Սարգիսբէկեանց՝ որ Հ. Իշխանութեան հրամանաց ընդդէմ վարուելով ընդդիմացած էր օրինաւոր տնօրինութեան նորին, ուստի և արգելեալ էր յապա Քահանայագործութենէ, Թոյլատրեցաւ կրկին վարել Քահանայագործութիւն և միանգամայն ընդունեցաւ զգուշութեան պատուէրներ՝ միւսանգամ չվստահանալ իշխանութեան կամաց հակառակելու համար երկնչելով խստագոյն պատժոց ենթարկուելէն։

„ 8.—Արժ. Արթանէս Վարդապետն՝ ըստ խնդրանաց իւրոց արձակեցաւ Կարմիր վանուց վանահայրութեան պաշտօնէն. և ՚ի տեղի նորին վանահայր կարգեցաւ Անդամ Հ. Կառավարութեան Տաթևու Արժ. Ներսէս Վարդապետ. Նա և ՚ի տեղի վերջնոյն՝ Տաթևու Հ. կառավարութեան անդամ նշանակեցաւ Բարեկ. Սիմէօն Քահանայն Ոստապօլեանց։

„ 8.—Հ.—Նախիջևանայ վիճակին Ցղնայ գեղջ Բարսեղ և Ստեփաննոս Քահանայքըն՝ որք ՚Ծայրագոյն—Հոգևոր Իշխանութեան կողմանէ իւրեանց վերայ եղեալ յանձնարարութեանց կատարման խոչընդոտ կացած են, մի ամիս հրաժարեցուցանելով ՚ի Քահանայագործութենէ՝ ՚ի ներքոյ պատժոյ արկանելոյ, և ՚ի նոյն միջոցի՝ առ դրան Եկեղեցւոյ տեղւոյն առանց փիլոնի ապաշխարել պարտաւորեցուցանելոյ աղագաւ՝ Երևանայ Թեմական Ատենին լուծումն տրուեցաւ ՚ի խրատ նոցին առյապայն և ՚ի զգուշութիւն այլոց։

„ 28.—Աստրախանայ Թեմական Ատենին լուծումն տրուեցաւ՝ Սարկաւագ Յովհաննէս Պողոսեանցին և Դպիր Պետրոս Լազարեանցին Եկեղեցւոյ մէջ զմիմեանս արհամարհելով հակաքրիստոնէական վարմանց և գործոց աղագաւ՝ իւր ենթադասութիւնը ՚ի կատար ածելոյ, միայն նոյն երկու յանցաւորաց ապաշխարութեան ժամանակը վեց ամիս սահմանելով։

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.